ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2023-2025
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
ԵՎ 2023
ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

01 մարտի, 2022թ.

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն աշխատանքներ է իրականացրել ՀՀ արտաքին քաղաքականության ուղենիշների և կառավարության ծրագրի իրականացման, բարեփոխումների և զարգացման օրակարգի խթանման, միջազգային գործընկերների և կառույցների հետ փոխգործակցության ամրապնդման ուղղությամբ՝ ՀՀ պետական շահերի պաշտպանության, ինքնիշխանության ամրապնդման, Արցախի ժողովրդի իրավունքների և անվտանգության ապահովման, պատերազմի հետևանքով ծագած հումանիտար խնդիրների հաղթահարման նպատակով:

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը ՀՀ Սահմանադրության և օրենքների, Կառավարության ծրագրի և վարչապետի հանձնարարականների հիման վրա շարունակել է իրականացնել ՀՀ արտաքին քաղաքականության գործնական վարույթը, կազմակերպել և համակարգել է դիվանագիտական ծառայությունն օտարերկրյա պետություններում և միջազգային կառույցներում:

Նշված ժամանակահատվածում ՀՀ արտաքին քաղաքականությունը ծավալվել է COVID-19 համավարակի, 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Թուրքիայի աջակցությամբ և միջազգային ահաբեկիչների ներգրավմամբ Արցախի դեմ սանձազերծված լայնածավալ պատերազմի հետևանքով ձևավորված ճգնաժամի պայմաններում:

- **Արցախյան հակամարտության** կարգավորման հարցում Հայաստանը հավատարիմ է եղել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ իրականացվող բանակցային գործընթացի շրջանակում հիմնահարցը բացառապես խաղաղ, միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի հիման վրա լուծելու հանձնառությանը:

2019թ. ջանքերն ուղղված են եղել հակամարտության կարգավորման համար բարենպաստ պայմանների ձևավորմանը, այդ թվում՝ հասարակությունների միջև փոխվաստահության մթնոլորտի ձևավորման միջոցով:

Ի հեճուկս գործադրված ջանքերի 2020թ. հուլիսի 12-ին Ադրբեջանը զինված բախում է սադրել հայ-ադրբեջանական սահմանի Տավուշի հատվածում:

2020թ. սեպտեմբերի 27-ին Թուրքիայի օժանդակությամբ և ահաբեկչական խմբավորումների ներգրավմամբ Ադրբեջանը լայնածավալ ռազմական գործողություններ է սանձազերծել Արցախի դեմ, որոնք դադարեցվել են **2020թ. նոյեմբերի 9-ին** ՀՀ վարչապետի, ՌԴ և Ադրբեջանի նախագահների միջև ստորագրված հայտարարությամբ:

2021 թվականին շարունակվել են ջանքերն՝ ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության մանդատի ներքո կողմերին հայտնի միջազգային իրավունքի սկզբունքների և տարրերի, այդ թվում՝ «անջատում հանուն փրկության» բանաձևի հիման վրա Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման շուրջ բովանդակային բանակցությունների լիարժեք վերսկսմանը: Շուրջ մեկամյա դադարից հետո ինչպես շահագրգիռ պետությունների դիրքորոշման, այնպես էլ

հայկական կողմի հետևողական աշխատանքների շնորհիվ **2021թ. սեպտեմբերի 24-ին Նյու Յորքում** տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի նախարարների առաջին հանդիպումը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության մասնակցությամբ և միջնորդությամբ:

ԵԱՀԿ համանախագահության ձևաչափով հաջորդ հանդիպումը տեղի է ունեցել **2021թ. նոյեմբերի 10-ին Փարիզում**, Ֆրանսիայի արտգործնախարար Լը Դրիանի բացմամբ: Հնգակողմ հանդիպման ընթացքում վերահաստատվել է դեէսկալացիայի և հումանիտար խնդիրների կարգավորման անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ սադրանքների ու հայատյաց հռետորաբանության անընդունելիությունը:

Ստոկհոլմում ԵԱՀԿ ամենամյա նախարարական խորհրդաժողովի ընթացքում ԵԱՀԿ մասնակից պետությունների մեծամասնության, ինչպես նաև մի շարք միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից հստակ ընդգծվել է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ԵԱՀԿ ՄԽ համանախագահության ձևաչափում բանակցությունների միջոցով կարգավորելու անհրաժեշտությունը:

2021թ. դեկտեմբերի 17-ին հայկական կողմի ջանքերով ԵԱՀԿ գործող նախագահության՝ Շվեդիայի կողմից կազմակերպվել է **«ԵԱՀԿ Մինսկի կոնֆերանսի կողմից հասցեագրվող հակամարտությունը. նախորդ տարվա ռազմական գործողությունների հետևանքներից դեպի քաղաքական կարգավորում»** խորագրով համաժողովը, որի շրջանակներում քննարկվել են հակամարտության վերափոխման հնարավորությունները, հումանիտար խնդիրների հասցեագրումը և քաղաքական գործընթացի վերագործարկման ուղիները:

2021 թվականին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները և համանախագահող երկրներն ընդունել են **11** հայտարարություն, որոնցում անդրադարձել են կողմերին հայտնի սկզբունքների և տարրերի հիման վրա Լեռնային Ղարաբաղի հակամարտության քաղաքական կարգավորմանը, հումանիտար հարցերի հասցեագրմանը, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղ հումանիտար մուտքի ապահովմանը, մշակութային և կրոնական ժառանգության պաշտպանությանը, վստահության ամրապնդման անհրաժեշտությանը, ինչպես նաև հայ-ադրբեջանական սահմանամերձ տարածքներում ռազմական գործողություններին:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են նաև 44-օրյա պատերազմի առաջին իսկ օրերից մեկնարկած աշխատանքներն՝ ուղղված Արցախում միջազգային կազմակերպությունների ներգրավմանն ու հումանիտար աջակցության տրամադրմանը: Առաջնահերթ նպատակ է սահմանվել բոլոր տեղահանված անձանց կամավոր, անվտանգ ու արժանապատիվ վերադարձն Արցախ:

ՄԱԿ-ի մարդասիրական մարմինների հետ շարունակաբար քննարկվել է Արցախ մարդասիրական առաքելություն ուղարկելու հարցը: Պատերազմի հետևանքով տեղահանված անձանց մարդասիրական կարիքները հոգալու նպատակով լրացումներ են կատարվել **«2021-2025թթ. համար Հայաստան-ՄԱԿ կայուն զարգացման համագործակցության**

շրջանակ» փաստաթղթում (*ստորագրվել է 2021թ. հունիսի 1-ին*), ինչպես նաև ՄԱԿ-ի գործակալությունների, մասնավորապես՝ **ՄԱԶԾ (UNDP), ՄԱԲՀ (UNFPA) և ՅՈՒՆԻՍԵՖ**-ի՝ Հայաստանի համար ծրագրային փաստաթղթերում:

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը պատերազմից տուժածներին մարդասիրական օգնության տրամադրման աշխատանքների համակարգման նպատակով մեկնարկել է նաև ՄԱԿ-ի միջգործակալական արձագանքման ծրագիրը (*Inter-Agency Response Plan*), որը 2021թ.-ի ընթացքում աշխատանքներ է իրագործել 5 ուղղություններով՝ **սննդի անվտանգություն, առողջապահություն, մարդկային անվտանգության ապահովում, կացարանների տրամադրում** և **վաղ վերականգնում**:

-Շարունակվել են աշխատանքներն **Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների և պատանդների ազատ արձակման**, միջազգային բարձրաստիճան պաշտոնյաներին, պետությունների ղեկավարներին, խորհրդարանականներին, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին և փորձագետներին խնդրի ներկայացման ուղղությամբ՝ ՄԱԿ, ԵԽ, ԵԱՀԿ համապատասխան ընթացակարգերի կիրառմամբ:

Արդյունքում ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերը (Խոշտանգումների հարցով ՄԱԿ հատուկ զեկուցող, Բռնի անհետացման հարցերով ՄԱԿ աշխատանքային խմբի նախագահող և Արտադատական, արագացված մահապատիժների հարցերով հատուկ զեկուցողներ) հանդես են եկել **«Լեռնային Ղարաբաղ. բոլոր գերիները պետք է ազատ արձակվեն»** խորագրով հայտարարությամբ, որում հղում են կատարում 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությանը: ԵՄ շրջանակներում հայ գերիների վերադարձի անհրաժեշտության խնդիրը բարձրացվել է Եվրոպական հանձնաժողովի նախագահի, ԵՄ Արտաքին հարաբերությունների ծառայության խոսնակի, Եվրոպական խորհրդարանի 100-ից ավելի պատգամավորների կողմից: ԵԽԽՎ հունվարյան նստաշրջանի ընթացքում ռազմագերիների վերադարձի հարցը ներառվել է վեհաժողովի մոնիտորինգային գործընթացների վերաբերյալ բանաձևում: Հայ գերիների վերադարձի խնդրին են անդրադարձել նաև **Human Rights Watch** և **Freedom House** իրավապաշտպան կազմակերպությունները: **2021թ. մայիսի 20-ին** Եվրոպական խորհրդարանը 607 անդամների ձայնով ընդունել է հայ գերիների անհապաղ ազատման և վերադարձի կոչ անող բանաձև:

-ԱԳՆ կողմից շարունակվել է համագործակցությունը մշակութային արժեքների պաշտպանության ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների (ՅՈՒՆԵՍԿՕ) հետ՝ ուղղված **Արցախի հայկական մշակութային և կրոնական ժառանգության երաշխավորված պաշտպանությանը:** Մասնավորապես՝ ձեռնարկվել են անհրաժեշտ քայլեր միջազգային հանրության ուշադրությունը կատարվող հանցագործություններին սևեռելու, պատմամշակութային հուշարձանների,

հնագիտական վայրերի և թանգարանային առարկաների դիտավորյալ ոչնչացման և վնասման դեպքերը դատապարտելու և կանխելու ուղղությամբ:

Հայաստանը կառուցողական կերպով ներգրավված է եղել Արցախ և հարակից շրջաններ ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստահավաք առաքելության հնարավորինս արագ գործուղման գործընթացում: Շարունակական ակտիվ ջանքեր են գործադրվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի կողմից ի սկզբանե հայտարարված և Զինված հակամարտությունների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954թ. Հաագայի կոնվենցիայի Երկրորդ արձանագրության միջկառավարական կոմիտեի հայտարարությամբ վերահաստատված ձևաչափով առաքելությունն իրականացնելու ուղղությամբ:

- Շարունակվել են աշխատանքները **Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ**:

2021 թվականի ապրիլի 24-ին ԱՄՆ նախագահ Ջոզեֆ Բայդենը հանդես է եկել Հայոց ցեղասպանությունը ճանաչող հայտարարությամբ:

Լատվիայի խորհրդարանը **2021թ. մայիսի 6-ին** պաշտոնապես ճանաչել և դատապարտել է Հայոց ցեղասպանությունը:

Նոյեմբերի 9-ին Միացյալ Թագավորության խորհրդարանի Համայնքների պալատում ՄԹ-ՀՀ բարեկամական խմբի ղեկավար Թիմ Լոութընը առաջին ընթերցմամբ ներկայացրել է Հայոց ցեղասպանության ճանաչման օրինագիծը (‘Recognition of Armenian Genocide Bill’):

- Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են ջանքերն՝ ուղղված տարածաշրջանային խաղաղության հաստատմանը, **խաղաղության օրակարգի առաջմղմանը**, տարածաշրջանի ապաշրջափակմանը: ՀՀ ԱԳՆ աջակցություն է ցուցաբերել ՀՀ, ՌԴ և ԱՀ ղեկավարների կողմից 2020 թվականի նոյեմբերի 9-ի և 2021 թվականի հունվարի 11-ին ստորագրված եռակողմ հայտարարությունների ամբողջական իրագործմանն ուղղված եռակողմ աշխատանքային խմբերի գործունեությանը, 2021թ. նոյեմբերի 26-ին Սոչիում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի եռակողմ հանդիպման արդյունքում ընդունված համատեղ հայտարարության դրույթների իրագործմանը:

Ջանքեր են գործադրվել՝ ուղղված Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերությունների կարգավորմանը, սահմանակից երկրների և տարածաշրջանային դերակատարների հետ տարածաշրջանային հայանպաստ ձևաչափերի քննարկմանը: Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացի հատուկ ներկայացուցիչներ ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանի և դեսպան Սերդար Քըլըչի առաջին հանդիպումներ են տեղի ունեցել 2022թ. հունվարի 14-ին

Մոսկվայում և փետրվարի 24-ին Վիեննայում:

2021թ. դեկտեմբերի 10-ին Մոսկվայում տեղի է ունեցել «3+3» տարածաշրջանային խորհրդակցական հարթակի ձևավորմանն ուղղված առաջին հանդիպումը, որի ընթացքում քննարկվել են տարածաշրջանային հնարավոր համագործակցության շրջանակները:

- Հայաստանը շարունակել է ամրապնդել և խորացնել ռազմավարական դաշնակցային հարաբերությունները **Ռուսաստանի Դաշնության** հետ, ինչին նպաստել են երկու երկրների բարձրագույն ղեկավարության միջև հանդիպումները: Մասնավորապես, ակտիվ փոխգործակցություն է ծավալվել ռազմական, տնտեսական, հումանիտար, միջխորհրդարանական կապերի և ապակենտրոնացված համագործակցության զարգացման ուղղությամբ:

- ՀՀ ակտիվորեն մասնակցել է Եվրասիական տնտեսական ինտեգրման խորացման, **ԵԱՏՄ** անդամ պետությունների հետ համագործակցության ընդլայնման, եվրասիական տարածաշրջանի տնտեսական ներուժի բացահայտման և իրացման գործընթացին: Եվրասիական տնտեսական միության շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում (2019-2021) տեղի են ունեցել մի շարք բազմամակարդակ նիստեր (այդ թվում՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ 9, Եվրասիական միջկառավարական խորհրդի՝ 14 նիստ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի նիստերը տեղի են ունեցել յուրաքանչյուր ամիս):

- **Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպության** շրջանակներում Հայաստանը շարունակել է հանդես գալ կառույցի ամրապնդմանն ուղղված նախաձեռնություններով: Մասնավորապես քայլեր են ձեռնարկվել գործող ընթացակարգերի լավարկման, ՀԱՊԿ պետությունների կողմից միմյանց հանդեպ դաշնակցային պարտավորությունների կատարումն ապահովելու, կազմակերպության նորմատիվ իրավական հենքը լրամշակելու ուղղությամբ:

-Հայաստանը շարունակել է ակտիվ ներգրավվածությունը **ԱՊՀ** շրջանակներում իրականացվող ինտեգրացիոն գործընթացներին, շարունակական ջանքեր են գործադրվել ԱՊՀ մասնակից պետությունների հետ ձևավորված ավանդական կապերի խորացման ուղղությամբ:

- Ակտիվ աշխատանքներ են իրականացվել հարևան պետությունների՝ **Վրաստանի և Իրանի** հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններն ամրապնդելու և խորացնելու ուղղությամբ: 2021թ. բարձրաստիճան մի շարք փոխայցելությունների շնորհիվ ակտիվ քաղաքական երկխոսություն է ծավալվել ՀՀ և Վրաստանի, ՀՀ և ԻԻՀ միջև:

- Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգում կարևոր տեղ է զբաղեցրել նաև **ԱՄՆ** հետ բարեկամական գործընկերության զարգացումը: Պահպանվել է ԱՄՆ հետ տարբեր մակարդակներում ակտիվ երկխոսությունը: 2019թ. Երևանում տեղի է ունեցել հայ-ամերիկյան ռազմավարական երկխոսության անդրանիկ նիստը: 2019թ. սեպտեմբերի 24-ին ԱԳ նախարարը և Կալիֆորնիայի նահանգապետը Նյու Յորքում ստորագրել են Հայաստան-Կալիֆորնիա շրջանակային համաձայնագիրը:

2020թ. սեպտեմբերին առցանց եղանակով կայացել է ՀՀ-ԱՄՆ միջև Առևտրի ու ներդրումների շրջանակային համաձայնագրի (TIFA) խորհրդի հերթական նիստը:

Հայաստանը բարձրագույն՝ ՀՀ վարչապետի մակարդակով մասնակցություն է ունեցել ԱՄՆ նախագահ Բայդենի վարչակազմի կողմից 2021թ. **դեկտեմբերի 9-ից 10-ը** կազմակերպված «Հանուն ժողովրդավարության գագաթաժողովին»: ՀՀ վարչապետը նաև գրավոր հայտարարությամբ է հանդես եկել **սեպտեմբերի 22-ին** կայացած «Համաշխարհային Քովիդ-19 գագաթաժողովին»:

- Ակտիվորեն շարունակվել են **հայ-ֆրանսիական** առանձնաշնորհյալ հարաբերությունների և ընդգրկուն օրակարգի խորացմանը և ամրապնդմանն ուղղված ջանքերը:

2021թ. Արցախ են այցելել ԵՄ խորհրդարանի ֆրանսիացի պատգամավոր, եվրոպական հարցերով նախկին նախարար Նատալի Լուազոն (հուլիս), Իլ-դը-Ֆրանս շրջանային խորհրդի նախագահ Վալերի Պեկրեսը (դեկտեմբեր) և երկու տասնյակից ավելի ֆրանսիացի խորհրդարանականներ ու քաղաքապետեր:

2021թ. հունիսին 1-2-ին կայացել է ՀՀ վարչապետի այցը Ֆրանսիա, որի ընթացքում կայացել են ՀՀ վարչապետի հանդիպումները Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, Սենատի նախագահ Ժերար Լարշեի, Ազգային ժողովի նախագահ Ռիշար Ֆերանի, Փարիզի քաղաքապետ Անն Հիդալգոյի հետ:

2021թ. դեկտեմբերի 9-ին Փարիզում տեղի է ունեցել Հայ-ֆրանսիական տնտեսական համագործակցության աշխատանքային խմբի առաջին համատեղ նիստը: Հայկական պատվիրակությունը գլխավորել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը, ֆրանսիականը՝ Ֆրանսիայի արտաքին գործերի լիազոր նախարար Ժան-Բատիստ Լեմուանը: Նիստի ընթացքում ստորագրվել է **Հայ-ֆրանսիական տնտեսական համագործակցության 2021-2026թթ. ճանապարհային քարտեզը**, որը սահմանում է ենթակառուցվածքների, քաղաքաշինության, էներգետիկայի, գյուղատնտեսության, զբոսաշրջության, առողջապահության, բարձր տեխնոլոգիաների ոլորտներում գործողությունների ծրագրեր, ինչը կնպաստի հայ-ֆրանսիական տնտեսական համագործակցության զարգացմանն ու ընդլայնմանը:

2021թ. դեկտեմբերին 16-ին Բրյուսելում ֆրանսիական կողմի նախաձեռնությամբ տեղի է ունեցել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի եռակողմ հանդիպումը:

- Շարունակվել է ակտիվ համագործակցությունը Հայաստանի և **Եվրոպական Միության** միջև:

2021թ. մարտի 1-ից ամբողջությամբ ուժի մեջ է մտել ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը: **Մայիսի 26–ին** Միջգերատեսչական հանձնաժողովը հավանության է արժանացրել ՀԸԳՀ դրույթների

կիրարկման վերաբերյալ ճանապարհային քարտեզը, որի իրականացումը մեկնարկել է **2021թ. հունիսի 1–ից** ՀՀ վարչապետի 587–Լ որոշմամբ:

- Շարունակվել են եվրոպական երկրների հետ՝ երկկողմ գործընկերային կապերի զարգացման ուղղությամբ աշխատանքները:

- Աշխատանքներ են իրականացվել **ասիական տարածաշրջանի**՝ հատկապես Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի հետ համագործակցության խորացման ուղղությամբ:

2021թ. հոկտեմբերի 12-ից 13-ը կայացել է **Հնդկաստանի Հանրապետության** արտաքին գործերի նախարար Սուբրամանյամ Ջայշանկարի գլխավորած պատվիրակության պաշտոնական այցը Հայաստան, որը ԱԳ նախարարի մակարդակով առաջին այցն էր Հայաստան:

2021թ. փետրվարի 16-ին **Ճապոնիայի** կառավարությունը որոշում է ընդունել ՀՀ-ում և ԼՂ-ում հետպատերազմյան վերականգնողական աշխատանքների համար հատկացնելու 3.6 մլն. ԱՄՆ դոլարին համարժեք հումանիտար օգնություն՝ միջազգային կազմակերպությունների միջոցով (UNHCR՝ 2 մլն. ԱՄՆ դոլար, UNICEF՝ 1 մլն. ԱՄՆ դոլար, IOM՝ 0.2 մլն. ԱՄՆ դոլար, ICRC՝ 0.4 մլն. ԱՄՆ դոլար):

2021թ. նոյեմբերի 15-ին ստորագրվել է տեխնիկատնտեսական համագործակցութան մասին համաձայնագիր ՀՀ և ՉԺՀ կառավարությունների միջև, որով Չինաստանի կառավարության կողմից 100 մլն. ՉԺՀ յուանի օգնության շրջանակներում նախատեսվում է իրականացնել Հայաստանի հանրային հեռուստատեսության համար նոր՝ 8-րդ տաղավարի շինարարության նախագիծը:

- Ուշադրության կենտրոնում են եղել զարգացումներն **արաբական աշխարհում**: Օրակարգում շարունակել են առանցքային տեղ զբաղեցնել սիրիահայության անվտանգության, Սիրիայի հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման հարցերը: 2019թ. փետրվարից Սիրիայում գործում է հայկական մարդասիրական առաքելությունը, որը նպատակ ունի օժանդակություն ցուցաբերել հումանիտար ծանր վիճակում հայտնված մեր հայրենակիցներին և սիրիացի բարեկամ ժողովրդին: Այդ նպատակով Հայաստանը համագործակցում է նաև ՄԱԿ հովանու ներքո Սիրիայում մարդասիրական գործունեություն ծավալող միջազգային կառույցների և Սիրիայի իշխանությունների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության կողմից աջակցություն է ցուցաբերվել **Մերձավոր Արևելքի** վտանգված հայ համայնքներին: Այդ թվում՝ ԱԳՆ կողմից համակարգվել է տարբեր խողովակներով տրամադրվող մարդասիրական օգնությունը Լիբանանի Հանրապետությանը՝ լիբանանահայ համայնքին:

- Քայլեր են ձեռնարկվել դիվանագիտական կապերի աշխարհագրության ընդլայնման ուղղությամբ: 2019թ. **Կատարի Պետությունում** բացվել է ՀՀ դեսպանություն և նշանակվել է ռեզիդենտ դեսպան:

--**2020թ. հունվարից** սկսել է գործել **Եթովպիայում** ՀՀ դեսպանությունը: Նպատակ ունենալով զարգացնել Մաղրիբի երկրների հետ հարաբերությունները՝ Հայաստանը ոչ ռեզիդենտ դեսպան է հավատարմագրել **Թունիսում** և **Մարոկկոյում** (նստավայրը՝ Երևան):

2020թ. փետրվարից սկսել է գործել Իսրայելում ՀՀ դեսպանությունը, **նոյեմբերից**՝ Էրբիլում ՀՀ գլխավոր հյուպատոսությունը:

-Շարունակվել են **Ամերիկյան մայրցամաքի** պետությունների հետ՝ Բրազիլիա, Արգենտինա, Մեքսիկա, Ուրուգվայ և այլ, համագործակցության խորացման ուղղությամբ աշխատանքները:

Բազմակողմ համագործակցություն

- ՀՀ շարունակել է խորացնել ներգրավվածությունը **Միավորված ազգերի կազմակերպության** կառույցներում: 2019թ. մարտի 22-ին Հայաստանը ստանձնել է **ՄԱԿ Կանանց կարգավիճակով հանձնաժողովի (CSW)** նախագահությունը: Հոկտեմբերի 17-ին Հայաստանն ընտրվել է **Մարդու իրավունքների խորհրդի** անդամ՝ 2020-2022թթ. ժամանակահատվածի համար:

Շարունակվել են աշխատանքները մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ: 2020թ. հունիսի 22-ին Ժնևում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 43-րդ նստաշրջանում կոնսենսուսով ընդունվել է Հայաստանի նախաձեռնությամբ առաջադրված Ցեղասպանության կանխարգելում բանաձևը (Resolution on prevention of genocide):

2020թ. ապրիլի 22-ին ընդունվել է **«Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման նպատակների խորհրդի»** մասին **ՀՀ վարչապետի N 479-Ա որոշումը**: ԿԶՆ խորհուրդը ղեկավարում է ՀՀ փոխվարչապետ Միհր Գրիգորյանը: Նոր խորհուրդն ունի ավելի լայն մանդատ և իր կազմով ավելի ընդգրկուն է:

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացված մրցույթի արդյունքում **7 ոլորտներում գործող ՀԿ-ներ ներգրավվել են ԿԶՆ խորհրդում:**

2020թ. հուլիսի 10-ին ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի հովանու ներքո առցանց ձևաչափով բարձր մակարդակի քաղաքական ֆորումի ընթացքում Հայաստանը ներկայացրել է ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրականացման Ազգային կամավոր գնահատման երկրորդ զեկույցը: Ֆորումը 2020թ.-ին կրել է «Արագացված գործողության և վերափոխման ուղիներ. Գործողությունների տասնամյակի իրականացումը և կայուն զարգացման ապահովումը» (“Accelerated action and transformative pathways: realizing the decade of action and delivery for sustainable development”) խորագիրը:

ՄԺԾԾ ժամանակահատվածում կշարունակվեն աշխատանքներն՝ առաջ մղելու զարգացման օրակարգից բխող հանձնառությունների կատարումը, համակարգելու **2030 օրակարգի կայուն զարգացման** նպատակների իրականացմանն ուղղված ազգային գործընթացները, այդ թվում՝ **«Հայաստանի համար ՄԱԿ Կայուն զարգացման համագործակցության 2021-2025 թվականների շրջանակի»** իրագործման միջոցով:

ՄԺԾԾ ժամանակահատվածում կդիտարկվի **<u>Ազգային կամավոր գնահատման երրորդ զեկույցի</u>** ներկայացումը՝ արտացոլելու Հայաստանում 2020 թվականից Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) իրականացմանն ուղղված քայլերը, ՀՀ կողմից արձանագրված հաջողությունները, ինչպես նաև առկա մարտահրավերներն ու դրանց հաղթահարման հնարավոր ուղղությունները:

- 2019թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ կառավարությունն ընդունել է **Գենդերային քաղաքականության** իրականացման 2019-2023թթ. միջոցառումների ծրագիրը, որով նախատեսվում է քայլեր իրականացնել ՄԱԿ (այդ թվում՝ ՄԱԿ-ի Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի հանձնարարականների), ԵԱՀԿ և ԵՄ շրջանակներում գենդերային հարցերի վերաբերյալ ընդունված փաստաթղթերի և ՀՀ ստանձնած պարտավորությունների վերաբերյալ ՀՀ պետական պաշտոնյաների իրազեկվածության բարձրացման, ԵՄ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայի վավերացման ուղղությամբ: 2020թ. նոյեմբերին ՄԱԿ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեին (CEDAW) ներկայացվել է ՀՀ 7-րդ պարբերական զեկույցը:

- Հայաստանը շարունակել է ակտիվ մասնակցությունը **ԵԱՀԿ** գործունեության բոլոր երեք հարթություններում (ռազմաքաղաքական, տնտեսական-բնապահպանական և մարդու իրավունքների): Արցախի դեմ սանձազերծված պատերազմի առաջին իսկ օրից **ԵԱՀԿ Մշտական խորհրդում** ՀՀ պատվիրակությունը պարբերաբար բարձրացրել է «Արցախի և Հայաստանի դեմ Ադրբեջանի՝ Թուրքիայի և օտարերկրյա զինյալ ահաբեկիչների ուղղակի ներգրավվածությամբ ագրեսիան» խորագրով հարցը:

- ՀՀ ակտիվ մասնակցել է **Եվրոպայի Խորհրդում** ընթացող աշխատանքներին: 2019թ. հունիսին ազդարարվել է ՀՀ-ԵՄ 2019-2022թթ. Գործողությունների ծրագրի մեկնարկը, որի ժամանակ նաև նշվել է Գործողությունների ծրագրի 18,9 միլիոն եվրո բյուջեի մոտ 57 տոկոսի երաշխավորման մասին ՀՀ կառավարության կողմից առաջնահերթություն հռչակված ոլորտներում, ներառյալ՝ դատահիրավական ոլորտում բարեփոխումների իրականացման համար:

2021թ. ապրիլի 28-ին, տեղի է ունեցել Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հերթական՝ 1402 նիստը: Այն առանձնացել է հայ ռազմագերիների անհապաղ վերադարձի և Ադրբեջանի կողմից ՄԻԵԴ միջանկյալ միջոցների չկատարելու վերաբերյալ հայկական կողմի նախաձեռնությամբ և երրորդ երկրների ներգրավվածությամբ ծավալված

համապարփակ և բովանդակային քննարկումներով: Հաջողվել է ուշադրության կենտրոնում պահել հայ ռազմագերիների վերադարձի խնդիրը:

ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարը **2021թ. ապրիլի 20-ին** նամակ է հղել Ադրբեջանի նախագահին, որում նա խիստ մտահոգություն է հայտնել Բաքվում "Ռազմավարի պուրակի" բացման կապակցությամբ: Հանձնակատարի նամակը կոշտ արձագանքի է արժանացել ԵԽ-ում Ադրբեջանի մշտական ներկայացուցչի կողմից:

2021թ. նոյեմբերի 17-ին ԵԽ Գլխավոր քարտուղար Մարիա Պեյչինովիչ Բուրիչը հանդես է եկել հայտարարությամբ, որում հակամարտության խաղաղ կարգավորման կոչ է արել, հիշեցրել է, որ ԵԽ-ին անդամակցելիս Հայաստանը և Ադրբեջանը նման հանձնառություն են ստանձնել, վերահաստատել է կազմակերպության աջակցությունը Մինսկի խմբի համանախագահների միջնորդական ջանքերին:

-Տարբեր ծրագրերի շրջանակներում շարունակվել է փոխգործակցությունը **Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության** (ՆԱՏՕ) հետ: Հետևողական քայլեր են ձեռնարկվել ՀՀ-ՆԱՏՕ ԱԳԳԾ նոր փաստաթղթի տեքստի համաձայնեցման և ընդունման ուղղությամբ:

- Հայկական կողմը, որպես Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթաժողովում նախագահող երկիր, շարունակել է հետևել Երևանյան հռչակագրի և գագաթաժողովում ընդունված բանաձևերի կատարման ընթացքին, համապատասխան հաշվետվությունը հայկական պատվիրակությունը ներկայացրել է Ֆրանկոֆոնիայի նախարարների կոմիտեի 2020թ. նոյեմբերի 25-ին կայացած նիստին: 2021թ. **հոկտեմբերի 4-5-ը** Ֆրանկոֆոնիայի Գլխավոր քարտուղար Լուիզ Մուշիկիվաբոյի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով ժամանել է Հայաստան: **Հոկտեմբերի 28-ին** առցանց ձևաչափով կայացել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության նախարարների կոմիտեի 38-րդ արտահերթ նիստը՝ նվիրված Ֆրանկոֆոնիայի 18-րդ գագաթնաժողովի անցկացմանը:

- Արտաքին քաղաքական օրակարգում կարևոր տեղ է զբաղեցրել **տնտեսական բաղադրիչը**: Ջանքեր են գործադրվել միջազգային տնտեսական կառույցների և ֆինանսական հաստատությունների հետ կապերի զարգացման, տարբեր պետությունների հետ առևտրատնտեսական համագործակցության խորացման, հայկական արտադրանքի արտահանման համար նոր շուկաների բացահայտման, օտարերկրյա ներդումների խրախուսման, Հայաստանի տնտեսական և զբոսաշրջային հնարավորությունների ներկայացման ուղղությամբ:

-ՀՀ արտաքին գործերի նախարարությունը և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները աջակցել են **խորհրդարանական դիվանագիտության** ուղղությամբ աշխատանքներին:

-Լրացուցիչ ջանքեր են գործադրվել մի շարք երկրների հետ **ապակենտրոնացված համագործակցության** զարգացման ուղղությամբ:

- *Միջազգային հանրային կարծիք*. Շարունակվել են ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումների վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացմանը, հակահայկական քարոզչության հակազդմանը, մեր երկրի միջազգային հեղինակության ամրապնդմանն ուղղված աշխատանքները:

- *Հյուպատոսական ծառայություններ*. Արտգործնախարարության մշտական ուշադրության կենտրոնում է եղել արտերկրում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, ճգնաժամային իրավիճակներում հայտնված ՀՀ քաղաքացիներին և ազգությամբ հայերին օգնության ցուցաբերումը, պատշաճ հյուպատոսական ծառայությունների մատուցումը:

- *ԱԳՆ պետական արարողակարգի ծառայության կողմից* ապահովվել է ինչպես ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաների օտարերկրյա այցերի, այնպես էլ օտարերկրյա բարձրաստիճան պատվիրակությունների ՀՀ կատարած այցերի կազմակերպումը: 2021թ. կայացել է ՀՀ նախագահի 12 այց, այդ թվում՝ 1 պետական, 2 պաշտոնական, ՀՀ վարչապետի 17 այց, այդ թվում՝ 2 պաշտոնական, ԱԳ նախարարի՝ 14 աշխատանքային այց: Հայաստան են այցելել 6 երկրի կառավարությունների ղեկավարներ, 12 երկրի ԱԳ նախարարներ, 5 միջազգային կազմակերպությունների ղեկավարներ:

- 2021թ. ընթացքում ԱԳՆ կողմից նախապատրաստվել և ստորագրման է ներկայացվել 58 միջազգային պայմանագիր, իրականացվել է 38 միջազգային պայմանագրի վավերացման կամ հաստատման գործընթաց:

-ՀՀ ԱԳՆ կողմից, դեսպանությունների գործուն ջանքերով իրականացվել է մի շարք երկրների կողմից կորոնավիրուսային համավարակի դեմ պայքարի շրջանակներում Հայաստանին մարդասիրական աջակցության տրամադրումը:

ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցն իրականացնում է հետևյալ ամենամյա ծրագրերը. 1. «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» տասնմեկամյա ծրագիրը (տարեկան շրջանավարտների թիվը տատանվել է 16-ից 32-ի սահմաններում), 2011 թվականից՝ նաև 2. «Հյուպատոսական գործունեություն» մեկամյա ծրագիրը (տարեկան մասնակիցների թիվը՝ 9-16), 2014 թվականից՝ նաև 3. «Դիվանագետների և պետական մարմինների արտաքին կապերի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատակիցների վերապատրաստման» երկուս և կես ամյա ծրագիրը (տարեկան 20-24 մասնակից), և 2017թ-ից՝ նաև 4. լրագրողների վերապատրաստման դասընթացը (8-12 մասնակից):

2021 թվականից Դիվանագիտական դպրոցն իրականացնում է նաև օտար լեզուների, ինչպես նաև օտարերկրյա դիվանագետների վերապատրաստման դասընթացներ:

Մինչև 2018թ. ներառյալ Եվրոպական Միությունը ֆինանսավորել է Դիվանագիտական դպրոցի՝ արտերկրից հրավիրվող դասախոսների, ինչպես նաև այլ ծախսեր, ընդհանուր առմամբ այդ ընթացքում ծախսելով շուրջ 2,5 միլիոն եվրո:

2018թ. դադարեցված ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող ծախսերի մի մասը ստանձնել է ՀՀ կառավարությունը՝ 2019թ. ԴԴ բյուջեն ավելացնելով 50,000 եվրոյին համարժեք դրամով: Հատկացված գումարով Դպրոցը հոգում էր միայն մեկ՝ Վերապատրաստման ծրագրում ներգրաված, արտերկրից հրավիրվող 5 դասախոսների ծախսերը: Տարեկան նախկին մեկ անգամի փոխարեն, 2019թ-ից այդ ծրագիրն իրականացվում է տարեկան երկու անգամ: 2020թ-ից նախատեսվել էր իրականացնել նաև լրագրողների վերապատրաստման տարեկան երկու ծրագիր, սակայն կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված, մարտի սկզբին տեղի է ունեցել միայն մեկ դասընթաց:

2020թ.-ի «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» տասնմեկամսյա ծրագրի իրականացման համար Դիվանագիտական դպրոցը ֆինանսական աջակցություն է ստացել Եվրոպական միությունից: Սույն ծրագիրը համավարակի պատճառով ավարտվել է 2021թ.-ին: 2021թ-ից ՀՀ կառավարությունը ստանձնել է նաև այս ծրագրի ծախսերը:

2019-21թթ. ժամանակահատվածում Դիվանագիտական դպրոցում վերապատրաստվել է 108 դիվանագետ և պետական մարմինների արտաքին կապերի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատակից, 43 լրագրող և 21 դիվանագետ՝ հյուպատոսական գործունեության ոլորտում:

Դիվանագիտական դպրոցը մինչ 2021թ. ունեցել է «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» ծրագրի (դիվանագիտական կադրերի պատրաստման ծրագրի) 236 ունկնդիր և 219 շրջանավարտ, որոնցից ԱԳՆ աշխատանքի ընդունվել են 127-ը:

2020-21թթ. Դիվանագիտական դպրոցը լույս է ընծայել իր առաջին երեք հրատարակությունները:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

ՄԺԾԾ ժամանակահատվածում կշարունակվեն ջանքերն՝ ուղղված.

- ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության հովանու ներքո Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման շուրջ բովանդակային բանակցությունների լիարժեք վերսկսմանը և ծավալմանը՝ ուղղված Արցախի կարգավիճակի հստակեցմանը միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա:
- Արցախի ժողովրդի անվտանգության ապահովման և իրավունքների պաշտպանության հավելյալ միջազգային երաշխիքների ձևավորմանը:

- Ադրբեջանում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների և պատանդների ազատ արձակմանը, խնդրի ներկայացմանը միջազգային բարձրաստիճան պաշտոնյաներին, պետությունների ղեկավարներին, խորհրդարանականներին, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին և փորձագետներին՝ օգտագործելով ՄԱԿ, ԵԽ, ԵԱՀԿ համապատասխան ընթացակարգերը:

- Համագործակցությունը մշակութային արժեքների պաշտպանության ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների (ՅՈՒՆԵՍԿՕ) հետ՝ ուղղված Արցախի հայկական մշակութային և կրոնական ժառանգության երաշխավորված պաշտպանությանը:

- Տարածաշրջանային խաղաղության հաստատմանը, խաղաղության օրակարգի առաջմղմանը, տարածաշրջանի ապաշրջափակմանը և կայուն զարգացման պայմանների ապահովմանը:

- Աջակցությանը ցեղասպանության և մարդկության դեմ զանգվածային ոճրագործությունների կանխարգելման միջազգային ջանքերին, մասնավորապես՝ ՄԱԿ Մարդու իրավունքների խորհրդում «Ցեղասպանության կանխարգելում» Հայաստանի կողմից մշակված և երկու տարին մեկ ներկայացվող բանաձևի պարբերական ընդունման ապահովմանը, Ցեղասպանությունների հիշատակման և կանխարգելման միջազգային օրակարգով այլ միջոցառումների իրականացմանը, այդ թվում՝ «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության չորրորդ գլոբալ ֆորումի» կազմակերպմանը:

- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման օրակարգի առաջմղմանը՝ Հայաստանի անվտանգության երաշխիքների համակարգի ամրապնդման համատեքստում:

- Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունների և ռազմավարական գործընկերության ամրապնդմանը և Հայաստան-Ռուսաստան երկկողմ համագործակցության օրակարգի ընդլայնմանը բոլոր ուղղություններով, ներառյալ՝ ռազմաքաղաքական, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտային, հումանիտար, մշակութային ոլորտները:

- Ռուսաստանի հետ ԵԱՏՄ, ՀԱՊԿ, ԱՊՀ և բազմակողմ այլ ձևաչափերում համագործակցության խորացմանը:

- ԵԱՏՄ շրջանակներում նախաձեռնողական և փոխշահավետ համագործակցությանը՝ միտված կառույցի ընձեռած հնարավորությունների առավելագույն կիրառմանը, գործընկեր երկրների հետ առևտրաշրջանառության ծավալների աճին:

- Ակտիվ ներգրավվածությունը ՀԱՊԿ աշխատանքներին, կազմակերպության կառուցակարգերի ամրապնդմանը՝ ի նպաստ անդամ պետությունների և տարածաշրջանային անվտանգության ապահովման:

- Ակտիվ մասնակցությանը ԱՊՀ շրջանակներում համագործակցությանը և կազմակերպության ընթացիկ գործընթացներին, ԱՊՀ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացմանը:

- Հարևան երկրների հետ բարեկամական առանձնահատուկ բարիդրացիական հարաբերությունների հետագա զարգացմանը, փոխվստահության ամրապնդմանը և շարունակական երկխոսությանը:

- ՀՀ-ԱՄՆ բարեկամական գործընկերության զարգացմանը և խորացմանը, ժողովրդավարական բարեփոխումների, օրենքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի հարցերում փոխգործակցության ընդլայնմանը, տնտեսական և քաղաքական ոլորտներում երկխոսության ակտիվացմանը:

- Ֆրանսիայի Հանրապետության հետ առանձնաշնորհյալ հարաբերությունների ամրապնդմանը և զարգացմանը:

- Եվրոպական երկրների և Եվրոպական միության հետ երկկողմ և բազմակողմ համագործակցության ընդլայնմանը՝ Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) և այլ փաստաթղթերի հիման վրա:

- Եվրոպայի խորհրդում ՀՀ ակտիվ ներգրավվածության և նախաձեռնողական քաղաքականությանը:

- Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի հետ բարեկամական և փոխշահավետ կապերի ամրապնդմանը, համագործակցային նոր հարաբերությունների կայացմանը, Ասիական և խաղաօվկիանոսյան այլ երկրների հետ համագործակցության զարգացմանը, այդ թվում՝ համագործակցության բազմակողմ ձևաչափերում:

-Համագործակցության ընդլայնմանը Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հետ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում, ներառյալ՝ հակամարտության գոտիներում բնակվող մեր հայրենակիցների անվտանգության ապահովմանը:

-Համագործակցության զարգացմանն ամերիկյան մայրցամաքի պետությունների հետ:

- Ակտիվ համագործակցությանը ՄԱԿ շրջանակներում՝ կարևորելով կառույցի դերն ինչպես տարածաշրջանային խնդիրների հաղթահարման, այնպես էլ համաշխարհային/համընդհանուր մարտահրավերների ձևակերպման և դրանց հաղթահարման շուրջ աշխատանքների կազմակերպման առումով:

- Ակտիվ մասնակցությանը ԵԱՀԿ շրջանակներում ընթացող գործընթացներին՝ ելնելով այն հանգամանքից, որ ԵԱՀԿ-ն տարածաշրջանային անվտանգության և խաղաղության խնդիրների հասցեագրման կարևոր հարթակ է:

-Անվտանգության ոլորտի միջազգային երկկողմ համագործակցությանը, այդ թվում՝ ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսության շարունակականությանը, Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի հետևողական իրականացմանը:

- Օտարերկրյա պետություններում Հայաստանի քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու շահերի պաշտպանությանը:

-Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը:

- Հանրային արդյունավետ դիվանագիտության իրագործմանը՝ միջազգային ասպարեզում Հայաստանի դրական կերպարի ձևավորման, Հայաստանի մշակութային և պատմական ժառանգության հանրահռչակման, հակահայկական քարոզչության հակազդման նպատակով:

- Միջազգային առևտրատնտեսական համագործակցության ընդլայնմանը և խորացմանը:

ՀՀ ԱԳՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի նպատակները սահմանված են ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 23-ի N 1111 որոշմամբ և Դպրոցի կանոնադրությամբ:

Դիվանագիտական դպրոցի գործունեության շարունակական թիրախներ են մնում.

- ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի՝ որպես որակյալ կրթական և վերապատրաստման ծրագրեր իրականացնող հաստատության կարողությունների ամրապնդումը,
- Դիվանագետների վերապատրաստման ծրագրերի հետագա կատարելագործումը և շարունակական իրագործումը,
- Արտաքին քաղաքականության և դիվանագիտության ոլորտում գիտահետազոտական աշխատանքների ձեռնարկումը և դրանց մասնակցությունը,
- Դիվանագիտական դպրոցի՝ որպես արտաքին քաղաքականության և դիվանագիտության ոլորտում քննարկումների հարթակի կայացումը,
- Դիվանագիտական դպրոցի՝ որպես աշխարհում տեղի ունեցող գլոբալ և տարածաշրջանային նշանակության իրադարձությունների վերլուծության և արդի մարտահրավերների վերաբերյալ դիրքորոշումների քննարկման և ձևավորման հարթակի կայացումը,
- Դիվանագիտական դպրոցի և լեզվի ուսուցման արտերկրի հեղինակավոր կենտրոնների համատեղ ջանքերով մշակված «Անգլերեն դիվանագետների համար» դասընթացի հետագա դասավանդումը և նոր ունկնդիրների ներգրավումը,
- Վերապատրաստման նոր, այդ թվում՝ օտար լեզուների դասընթացների ներդրումը,
- Վերապատրաստման, թեստավորման և քննական եղած մեթոդների և մեխանիզմների կատարելագործումը և նորերի ներդրումը,
- Դիվանագիտական դպրոցի գրադարանի համալրումը մասնագիտական ժամանակակից գրականությամբ:

ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի գործունեությունն առնչվում է ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներից 4-րդի՝ որակյալ կրթության հետ, մասնավորապես 4.3, 4.5 և 4.7 կետերի հետ:

4.3. Մինչև 2030թ. բոլոր կանանց և տղամարդկանց համար ապահովել մատչելի և որակյալ տեխնիկական, միջին-մասնագիտական և բարձրագույն, այդ թվում՝ համալսարանական կրթության հավասար հասանելիություն - Հայաստանի դիվանագիտական դպրոցում ուսումն անվճար է, ԴԴ ընդունելության մրցույթին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի քաղաքացիները,

4.5. Մինչև 2030թ. վերացնել գենդերային անհավասարությունները կրթության ոլորտում և ապահովել հավասար հասանելիություն ուսման և միջին-մասնագիտական կրթության բոլոր մակարդակներում խոցելիների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց, տեղաբնիկ ժողովուրդների և խոցելի իրավիճակներում գտնվող երեխաների համար – Դիվանագիտական դպրոցն իր ուսումնական և վերապատրաստման ծրագրերում ապահովում է մասնակցության հավասար պայմաններ և հնարավորություններ,

4.7. Մինչև 2030թ. ապահովել, որ բոլոր սովորողները ձեռք բերեն կայուն զարգացումը խթանելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, այդ թվում, ի թիվս այլոց, կայուն զարգացման և կայուն կենսակերպի, մարդու իրավունքների, գենդերային հացասարության, խաղաղության և բռնությունը մերժող մշակույթի խթանման, աշխարհի քաղաքացիության, ինչպես նաև մշակութային բազմազանության և կայուն զարգացման մեջ մշակույթի ունեցած ավանդը գնահատող ուսուցմամբ – Դիվանագիտական դպրոցի «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» և դիվանագետների և այլ պետական մարմինների աշխատակիցների վերապատրաստման ծրագրերի առարկայացանկերում կան միջազգային կազմակերպությունների, դրանց կառուցվածքների, գործունեության և նպատակների մասին դասընթացներ, Դպրոցում դասավանդվում է նաև Գիտության դիվանագիտություն առարկան, որը ենթադրում է խթանել աշխարհի պետությունների միջև համագործակցությունը հանուն ընդհանուր նպատակների իրագործման: Դասընթացի ժամանակ քննարկվում են ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները որպես համագործակցության ոլորտներ:

ՀՀ ԱԳՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԳՆ Պետական արարողակարգի ծառայությունն իր հիմնական նպատակներին և խնդիրներին համապատասխան, իրականացնում է ՀՀ Նախագահի, ՀՀ վարչապետի, փոխվարչապետների և ԱԳ նախարարի

ղեկավարած պատվիրակությունների՝ օտարերկրյա պետություններ այցերի և նրանց մասնակցությամբ ՀՀ–ում անցկացվող միջազգային բնույթի պաշտոնական միջոցառումների, օտարերկրյա պետությունների, կառավարությունների, արտաքին հարաբերությունների գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների ղեկավարների ու նրանց ուղեկցող անձանց Հայաստանի Հանրապետություն այցերի պատշաճ մակարդակով նախապատրաստումն ու իրականացումը: Ծառայության գործառույթների շրջանակում են նաև ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների հետ դիվանագիտական արարողակարգային գրագրության իրականացումը, աշխատանքային և արարողակարգային հանդիպումների կազմակերպումը, դիվանագիտական անձնակազմի անձեռնմխելիության և արտոնությունների հետ կապված հարցերի կարգավորումը, օտարերկրյա և արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ տարվող արարողակարգային աշխատանքները, դրանց ղեկավարների հավատարմագրման և պարտականությունների ստանձման գործընթացները, ինչպես նաև ՀՀ Նախագահի և բարձրաստիճան այլ պաշտոնյաների մասնակցությամբ պետական միջոցառումների /ապրիլի 24, մայիսի 9, սեպտեմբերի 21 և այլն/ կազմակերպումը և անցկացումը:

2021թ. ծախսը կազմել 162,387.1 հազ. դրամ, 2022թ. հաստատվել է 183,598.1 հազ. դրամ: Համակարգի ընդհանուր նպատակների և գերակայությունների իրականացման համար կպահանջվի. 2023 թվականի համար՝ 181,926.5. հազ. դրամ, 2024 թվականի համար 182,561.4 հազ. դրամ և 2025 թվականի համար 184,207.4 հազ. դրամ բյուջետային հատկացումներ: